ՍԱՐԴԱՐԱՊԱՏԸ՝ ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

Մայիսի 28-ի առավոտյան, Հայաստանի Առաջին Հանրապետության (1918թ.) 78-րդ տարեդարձի առիթով, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, առավոտյան ժամերգությունից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Վեհափառը հետևյալ խոսքն ուղղեց Մայր Աթոռի միաբանությանն ու Հոգևոր ճեմարանի սաներին և ներկա հավատացյալներին:

Սիրելի միաբանակից եղբայրներ, սաներ և հավատացյալներ,

Երկու օր առաջ, կիրակի, հանդիսավոր կերպով և պաշտոնական հանգամանքով, մեր Մայր Տաճարում կատարվեց հոգեհանգստյան արարողություն 1918 թ. Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում և այլ վայրերում հայ ժողովրդի գոյամարտի օրհասական այդ օրերին իրենց կյանքը Հայրենիքի և ազգի ազատությանն ընծայաբերած հերոսների հոգիների խաղաղության համար: Հարգանք ընծայվեց 1918 թ. անկախությունը կերտողների հիշատակին, ապա գոհաբանական աղոթք մատուցվեց մեր Հայրենիքի նոր և անկախ պետության (1991 Սեպտեմբեր 21) ամրացման, զորացման և հառաջդիմության համար:

Այսօր, Մայիս 28-ի այս առավոտուն, երբ հավաքվել ենք Մայր Տաճարի այս սրբաճաճանչ կամարների ներքո, աղոթքի այս պահին, ես ցանկանում եմ վերակոչել բոլոր նահատակների և անկախությունը կերտող անձերի անմեռ ոգին և անթառամելի կտակը մեզ՝ ապրողներիս, և հատկապես, մեզ՝ Եկեղեցու սպասավորներիս:

Մենք չենք կարող մոռանալ, որ 1918 թ. անկախությունը օրհնվել և նվիրագործվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հայրապետական օրհնությամբը Հայոց դրոշին և բանակին, Գեորգ Ե Կաթողիկոսի կողմից: Մենք չենք կարող մոռանալ, որ այս Աթոռի ամենեն նվիրյալ և գիտնական դեմքերից Գարեգին Հովսեփյան եպիսկոպոսը խաչն ի ձեռին եղել է Սարդարապատում, կանգնել է կողքին հայ մարտիկների և ամրապնդել նրանց քաջությունը իր հավատարծարծ խոսքերով:

Աստված ինձ բախտավոր երջանկություն է տվել, որ ես անձամբ ճանաչել եմ այդ Հանրապետությունը կերտող և նրան ծառայած անձերից ոմանց՝ ինչպես Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանին, Նիկոլ Աղբալյանին, Լևոն Ծանթին, Սիմոն Վրացյանին և ուրիշներին: Իմ ականջներում երբեք չի լռի կենդանի ձայնը մանավանդ Գարեգին Հովսեփյանի և բաբախուն վկայությունները հայոց անկախության մյուս ճարտարապետների, որոնք Հայրենիքի մասին երբեք չէին խոսում որպես մի տեսակ գաղափարի, այլ իրենց ողջ գոյությանը հետ միաշաղախված էին զգում Հայրենիքը նրա կազմավորիչ բոլոր տարրերով:

Զգում եմ, որ այս պահին, Միածնաէջ այս խորանին առաջ, նրանց հոգիները երկնային երանական խաղաղության կայքերից հրճվում են գերազանց բերկրանքով ի տես իրենց գոյության հետ անքակտելիորեն տարրացած և իրենց կյանքովը պաշտված Հայրենիքի նոր, անկախ Հանրապետության ստեղծումովը և ազատության շունչի տարածումովը մեր Հայրենի աշխարհում:

Սարդարապատի հերոսների համար այսօր մեջբերում եմ ձեզ, որպես ուղեգիծ ձեր մտածման և կյանքի, մեր Ժամագրքում գինվորաց նվիրված ժամամուտ-աղոթքից հետևյալ բառերը. «Դուք, ձեր մարմինները փոխանակեցիք որպես փրկագին ձեր հոգիների»: Այո՛, նրանք իրենց մարմինները զոհաբերեցին ոչ թե տոկ հողի համար՝ հողեղեն արժեքով չափված և կշռված մի պատառ հողի համար, այլ Հայրենիքի՝ համար, այսինքն՝ իմաստավորված և հոգևորված հողին և հոգևոր ներգործությամբ խորհրդանշված և արժևորված մարդկային և ազգային սկզբունքների՝ արժանապատվության և ազատության համար:

***

Ի՞նչ ենք մենք տալիս մեզանից այսօր:

Սարդարապատ բառը այսօրվա մեր կյանքի բառարանում զգեցել է ուրիշ անուններ՝ Արցախ և Պետականությամբ օժտված Հայրենիքի վերաշինություն:

Այսօր Արցախի հողը և ժողովուրդը նույնքան նվիրական են մեզ համար, որքան Սարդարապատը: Ազատ և անկախ ապրելու նույն կամքն է, որ այսօր շքեղորեն դրսևորվում է Արցախի մեր հերոսական ժողովրդի կյանքում, ինչպես նաև բոլոր այն հայերի կյանքում՝ լինի Մայր Հայրենիքում կամ արտասահմանում, որոնց մեջ Արցախն է ապրում իբրև նվիրական պարտականություն: Այդ ժողովրդի կամքն է, որ պետք է դառնա մեր բոլորի հրամայականը այս օրերին:

Հայրենիքի անկախություն ունենալը գեղեցիկ է և պատվաբեր, բայց գեղեցկից ու պատվաբերից գեղեցկագույն և պատվականագույն են այդ անկախ Հայրենիքը պահպանելու, զորացնելու և զարգացնելու կամքը, նվիրումը և զոհաբերությունը:

Սարդարապատ բառը ուրիշ մեկ անուն ևս ունի այսօր: Դա մեր արտասահմանի հայ ժողովրդի հայակերտման գործի ուժեղացումն է, որովհետև այդ հայությունն էլ մաս կկազմի մեր Հայրենիքի ամբողջությանը: Ես լավ եմ իմանում, թե ի՞նչ հերոսական ճիգ է պահանջվում արտասահմանյան երկրներում, օտար մշակույթների ոլորտներում, ոչ թե միայն հայ մնալը, այլ հայորեն ապրելը Հայ Եկեղեցու հավատքով, հայ լեզվի մշակումով և Հայրենիքի անսասանության և հավերժության գաղափարով:

***

Սիրելի՛ք,

Ավետարանում մի սքանչելի դրվագ կա, որ իմ սրտին համար հատուկ գրավչություն ունի: Դա այն պահն է, երբ Հիսուս կանգնած Երուսաղեմի տաճարի առաջ ոիտում էր, թե ինչպե՞ս եբրայեցի ժողովրդի զավակները

գալիս էին տաճար, որի մուտքին գետեղված էին գանձանակներ և որոնց մեջ ամեն մի անձ, որ տաճար էր մտնում, իր ընծան էր գցում: Շատերն անցան և շատ գումարներ դրեցին գանձանակի մեջ: Նրանց շարքում անցավ մի այրի կին՝ աղքատ, որ երկու լումա դրեց գանձանակի մեջ: Հանկարծ Հիսուս իր առաքյալներին իր մոտ կանչեց և ասաց. «Այդ այրի կինը ավելի տվեց, քան բոլոր մյուսները, որովհետև նա տվեց, ինչ որ ուներ իր ապրուստի համար»: Որովհետև մյուսները տվեցին իրենց ավելորդից, իսկ նա տվեց, ինչ որ ուներ...

Մեր բոլորի առաջ և բոլոր դարերում և բոլոր վայրերում մի գանձանակ կա զետեղված: Դրա անունն է պատմություն՝ հավաքական կյանքի կենդանի և հավերժորեն բաց գանձանակ: Նրա առջևից են անցել մեր հայրերը և դրել են այն, ինչ որ մենք կոչում ենք հայրերի ժառանգություն՝ իր հոգևոր, ազգային, մշակութային, քաղաքական բաղկացուցիչ տարրերով: Լուսավորիչն իր արցունքն է դրել որպես անսպառելի յուղ մեր հավատքի ամուր ճրագին, Մեսրոպ Մաշտոցն իր գիրն է դրել որպես մեր ինքնության դիմագիծ, Եզնիկն իր միտքն է դրել որպես կյանքի փիլիսոփայություն, Վարդանն իր սուրն է դրել որպես խորհրդանիշ հայրենապաշտության և եկեղեցապաշտպանության, Նարեկացին իր աղոթքն է դրել որպես հոգու սնուցման անմահացուցիչ կերակուր, Շնորհալին իր «Շարականն» է դրել որպես հայ հոգու նվագերգություն, Տաթևացին իր գրքերն է դրել որպես նախանձախնդրության վկայություն, հերոսներն ու նահատակները իրենց արյունն են դրել, հայ ծնողները իրենց զավակների սերն են դրել որպես կյանքի հաղթանակի ուժ:

Այսօր մենք՝ ապրողներս ենք անցնում այդ գանձանակի առաջից. ի՞նչ ենք դնում մենք: Ես հավատում եմ, որ մենք կոչվել ենք դնելու ոչ թե մեկանից մի բան, այլ՝ մենք վմեկ՝ որպես Եկեղեցու սպասավորներ՝ Մայր Աթոռի նվիրյալ միաբաններ: Մենք կոչվել ենք այսօր մեր ամբողջական և անվերապահ բաժինը բերելու մեր պատմության գանձանակին, մեր Հայրենիքի վերակերտումի հարաճուն գնացքին: Հոգևոր և բարոյական սկզբունքները Ավետարանի լույսով և Քրիստոսի կնիքով մեր ժողովրդի կյանքի հետ շաղախելու ստիպողական պարտավորության առջև ենք կանգնած:

Սարդարապատը շարունակվում է...

Շարունակվում է նաև մեր բաժինը Սարդարապատյան գոյամարտին և մեր նոր պետության կենսաշինության՝ մեր Հայրենիքում և ողջ աշխարհում:

Լինենք արժանավոր ժառանգորդները և գործուն շարունակողները Սարդարապատյան առաքելության...

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

28 Մայիս 1996,
Ս. Էջմիածին

****